ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
01 ՀՈՒԼԻՍԻ 2021 թվականի N 289-Ա

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱԶՄՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հանձնարարել Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների պետերին, վարչական ղեկավարներին, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և բյուջետային հիմնարկների տնօրեններին Նոյեմբերյան համայնքի 2022 թվականի բյուջեն կազմելու նպատակով ներկայացնել անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ հայտեր, իրենց պահպանման ծախսերի նախահաշիվները՝ համապատասխան հիմնավորումներով:
2. Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետին՝ Նոյեմբերյան համայնքի 2022 թվականի բյուջեի նախագիծը կազմելու նպատակով սահմանել աշխատանքների իրականացման ժամանակացույց՝ ըստ հավելվածի:
3. Որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Նարինե Ղազարյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԱԲԱՋՅԱՆ

2021 թ. հուլիսի 01
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
01 ՀՈՒԼԻՍԻ 2021 թվականի N 290-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2021 թվականի հուլիսի 28-ին հայտարարել Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների 1-ին ենթախմբի (պաշտոնի անձնագրի ծածկագիր՝ 3.1-12 և 3.1-7) թափուր պաշտոնների համար մրցույթներ:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ մրցույթների մասին հայտարարությունը տեղադրել Նոյեմբերյանի համայնքապետարանի պաշտոնական կայքում, ինչպես նաև https://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:
3. Մրցույթների կայացման սկիզբը հայտարարել 2021 թվականի հուլիսի 28-ի ժամը 11:00-ն:
4. Մրցույթների կայացման համար լիազոր անձ նշանակել Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱԲԱՋՅԱՆ

2021 թ. հուլիսի 01
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
01 ՀՈՒԼԻՍԻ 2021 թվականի N 291-Ա

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 10 ՄԱՐՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 120-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ինչպես նաև հիմք ընդունելով Սիրաք Մարգարյանի 29.06.2021 թվականի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ուժը կորցրած ճանաչել «Սիրաք Մարգարյան» ԱՁ-ին հեղուկ գազի վաճառքով զբաղվելու թույլտվություն տալու մասին Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 10 մարտի 2021 թվականի թիվ 120-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱԲԱՋՅԱՆ

2021 թ. հուլիսի 01
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
01 ՀՈՒԼԻՍԻ 2021 թվականի N 292-Ա

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 09 ՄԱՐՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 117-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ինչպես նաև հիմք ընդունելով «Պրես Ստենդ» ՍՊ ընկերության 28.06.2021 թվականի գրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ուժը կորցրած ճանաչել «Պրես Ստենդ» ՍՊԸ-ին արտաքին գովազդ տեղադրելու համար թույլտվություն տալու մասին Նոյեմբերյան համայնքի ղեկավարի 2021 թվականի մարտի 09-ի թիվ 117-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱԲԱՋՅԱՆ

2021 թ. հուլիսի 01
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
02 ՀՈՒԼԻՍԻ 2021 թվականի N 293-Ա

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Սահմանել Նոյեմբերյան համայնքի 2021 թվականի տեղական բյուջեի եկամուտների և ծախսերի կատարման եռամսյակային համամասնությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԱԲԱՋՅԱՆ

2021 թ. հուլիսի 02
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2021 թվականի N 294-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան քաղաքի 11-004-0117-0006 ծածկագրով տարածքում գտնվող անշարժ գույքին տալ հասցե՝ գրանցելով Նոյեմբերյան համայնք քաղաք Նոյեմբերյան Զորավար Անդրանիկի փողոց տուն 21 հասցեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱԲԱՋՅԱՆ

2021 թ. հուլիսի 08
ք. Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
08 ՀՈՒԼԻՍԻ 2021թվականի N 295-Ա

<<ՕՎՍԱՆՆԱ ԳՈՒԼՔԱՆՅԱՆ ԶԱՐՄՈՅԻ>> ԱՁ-Ի ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 219[1]-րդ հոդվածով, հիմք ընդունելով Ոստիկանության Տավուշի մարզային վարչության Նոյեմբերյանի բաժնի 02.07.2021 թվականի թիվ 87/3-3-2238 գրությամբ ներկայացված վարչական իրավախախտումների վերաբերյալ թիվ 11 արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<ՕՎՍԱՆՆԱ ԳՈՒԼՔԱՆՅԱՆ ԶԱՐՄՈՅԻ>> ԱՁ-ի կողմից առևտրի և ծառայությունների, ֆինանսների և տնայնագործական արհեստներով զբաղվելու բնագավառում թույլ տված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օր նշանակել 2021 թվականի հուլիսի 15-ը:
2. Օրենքով սահմանված կարգով ապահովել սույն որոշման ծանուցումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱԲԱՋՅԱՆ

2021 թ հուլիսի 8
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavushi@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
08 ՀՈՒԼԻՍԻ 2021թվականի N 296-Ա

ՍԵՐԺԻԿ ԱՆԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 219[1]-րդ հոդվածով, հիմք ընդունելով Նոյեմբերյան համայնքի վարչական տարածքում քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կատարվող խախտումներ հայտնաբերելու և արձանագրելու նպատակով ստեղծված մշտական հանձնաժողովի 08.07.2021 թվականի արձանագրությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սերժիկ Անանյանի կողմից Նոյեմբերյան համայնքի տարածքում քաղաքաշինության և բնակարանային-կոմունալ տնտեսության բնագավառում թույլ տված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օր նշանակել 2021 թվականի հուլիսի 9-ը:
2. Օրենքով սահմանված կարգով ապահովել սույն որոշման ծանուցումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱԲԱՋՅԱՆ

2021 հուլիսի 9
ք.Նոյեմբերյան

Ս. Սերժիկ Անանյան
ստացա իմ օրինակը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
09 ՀՈՒԼԻՍԻ 2021թվականի N 297-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի ա կետով և 23-րդ հոդվածի 1-ին մասով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սերժիկ Վաչիկի Անանյանի նկատմամբ նշանակել տուգանք 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով՝ Նոյեմբերյան քաղաքի Նոյեմբերի 29-ի փողոց 17/10 հասցեում գտնվող տարածքում ինքնակամ շինություն կառուցելու համար:
2. Սերժիկ Վաչիկի Անանյանին՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում տուգանքը փոխանցել Նոյեմբերյանի համայնքապետարանի բանկային՝ Հ/Հ 900395101463 հաշվին:
3. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողության ապահովումը հանձնարարել Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:
4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
5. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԵՆ ԱԲԱՋՅԱՆ

2021թ. հուլիսի 09
ք.Նոյեմբերյան

Մ.Տ. Սերժիկ Անանյանին
ուղարկված է մարմնակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՀՈՒԼԻՍԻ 2021 թվականի N 298-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Գյուլիզար Մեսրոպի Փամբուխչյանի անվամբ հաշվառված շինությանը տալ հասցե՝ գրանցելով Նոյեմբերյան համայնք քաղաք Նոյեմբերյան Դպրոցականների փողոց շենք 44 շինություն թիվ 4 հասցեում (ծածկագիր՝ 11-004-0039-0001-007):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԲԱՋՅԱՆ

2021 թ. հուլիսի 09
գ. Նոյեմբերյան